

դափոխական ընկերութեան մը կողմէ սպառնալիքով պահանջուած դրամը վճարել մերժելուն համար հայ վաճառականի մը սպաննուած մեծ ցաւ պատճառած է ինծի եւ հայոց բոլոր միւս քարեկամներուն: Կուգեմ իմ հայ բարեկամներու առջեւ զնեւ կարգ մը փաստեր, ցոյց աւելու համար սպառնալիքի ու մարդասպանութեան այս քաղաքականութեան յիմարութիւնն ու չարութիւնը:

«Ձայն Հայրենեաց»ի խմբագիրը մեր ժեց ինծի ետեւ տալ որ իր ընկերացիներուն առջեւ պարզեմ այս փաստերը, նամակի մը մէջ զոր դրամ էի այդ թերթին: այսպէս՝ ստիպուած եմ «Թէ-լէկրամ»ի ասպնջականութեանը գիմել: Անոր համար մանաւանդ կը ցաւեմ «Ձայն Հայրենեաց»ի իմ նամակս չի հրատարակելուն որովհետեւ մասնաւորապէս կը փափաքէի ձայնս հասցնել այն հայերուն, որոնք անգլիերէն չեն հասկնար: Կրթուած հայերը հաւանաբար չառնուող են թակայ են խարուելով դրամաշորքներու գործիք դառնալու: Կր յօսամ որ Անգլիերէն կարգացող հայերը այս նամակս կը թարգմանեն չի կրցողներուն:

Բոլոր քաղաքակիրթ երկիրներու մէջ սպառնալիքով դրամ չորթելը նկատուած է ամենաբարձր ոճիքներէն մէկը: Հայաստանի ազատութեան դատը—ամենէն լաւ դատերէն մէկը—պէտք չէ որ անպատուութիւն ասանկ մէթոտներով:

Ատիկա բոլորովին տարբեր է կովկասի այն հայոց արարքներէն՝ որոնք մեծ հարստահարութեանց ու անգթութեանց պատճառ եղած պաշտօնեաներ կը սպաննեն: Ատիկա տեսակ մը անկանոն արգարութիւն է: Երկրորդ անիշխանութեան վիճակի մը մէջ է անկարելի է հատուցում ձեռք բերել ու եւ է օրինական միջոցով, նոյնիսկ այն պաշտօնեաներուն դէմ որոնք ամենէն հրէշաւոր ոճիքները գործած են, եւ սոսկայիօրէն ճշդուած ժողովուրդը բնականաբար կը զգայ թէ անկանոն արգարութիւնը բնաւ արգարութիւն չըլլալէն աղէկ է:

Բայց Ամերիկայի մէջ դրամաշորքներու այս խմբակը կը սպաննէ անմեղ մարդիկ պարզապէս իրեն դրամ վճարել մերժելուն համար: Իրենց զոհերը իրենց իսկ հայրենակիցներուն լաւագոյններէն եղած են: Ատիկ Ուենհան որ սպառնալիքով պահանջուած դրամը չի վճարելուն համար սպաննուեցաւ Պոլսոյ մէջ, ամենէն առատաձեռն նպաստողն եղած էր հայ դպրոց-

ներու եւ անոր հետեւ հայ ուսանողներու կրթութեան:

Պ. Թաւադեան որ սպաննուեցաւ Նիւ-Եորքի մէջ, այդ քաղաքին լաւագոյն հայերէն մէկն էր, եթէ ոչ ամենալաւագոյնը: Պր. Կրելէզեան, Պոսթոնէն, որ սպառնալիք ստացաւ, մարդ մըն է զոր եւ լաւ ճանչցած եմ վերջին 14 տարիներէ ի վեր: Ես տեսած եմ անոր աստիճանաբար յառաջանալը խեղճութեան միջոցաւ հարստութիւն, եւ հարիւրաւոր պարագաներու մէջ ես անձնապէս գիտցած եմ իր բարեւորտութիւնն ու բարեգործութիւնը դէպի իր կարօտ հայրենակիցները:

Եթէ անոնք հաւտային իրենց մէջ դրամ պահանջող այդ յեղափոխական ընկերութեան օգտակարութեանը, այս երեք մարդերն ալ պիտի նպաստէին անոր առանց սպառնալիքի պէտք ըլլալու:

Ամէն մարդ գետէ թէ Սուլթանին կառավարութիւնը զգուշորէ՝ գէշ է, թէ ան կոտորածներ եւ ամէն տեսակ խեղճութիւններ կը գրպէն հայերուն դէմ թէ ասոնք իր լուծէն ազատելու համար յեղափոխութիւն մը օրհնութիւն պիտի ըլլայ: Եթէ յաջող կարենաւ ըլլալ, Բայց միշտեւ խելացի մարդոց մէջ մէկ կարծիք մը միայն կրնայ կենալ թուրք կառավարութեան գէշութեանը մասին, չառտարբեր կարծիքներ կան անկէ ազատելու լաւագոյն կերպին նկատմամբ:

Այդ կէտին վրայ մարդիկ անկեղծօրէն կը տարբերին: Պր. Ուենհան եւ Պր. Թաւադեան կը խորհէին թէ առ այժմ Թուրք պետութիւնը չառտարբեր է որպէս զի յաջող յեղափոխութիւն մը կարելի ըլլայ, եւ թէ անյաջող փորձեր աւելի մեծ աղէտներու միայն կառաջնորդեն:

Խնդիր չէ թէ ասոնք՝ սխալ կամ չիտակ էին ասանկ խորհելով, առաջ անկեղծ էին իրենց կարծիքին մէջ եւ անոնք չէին կրնար խղճմտօրէն տալ իրենց դրամը բանի մը, որ կը կարծէին թէ աւելի չարիք պիտի բնէին քան բարիք:

Տարակոյս չկայ թէ ասոնք՝ կրթեալ ու խելացի մարդիկ ըլլալով՝ կրթականացնէին թէ՛ եթէ երբէք յեղափոխական շարժում մը կրնայ յաջողի՝ անիկա չի կրնար յաջողիլ առաջնորդութեանը տակ մարդեղու, որոնք սպառնալիքով դրամ չորթել փորձելու չափ անսկզբունք են: Ու եւ մարդ որ այդ կերպով դրամ ձեռք բերելու չափ գէշ է այդ դրամը իր գրպանը դնելու չափ գէշ պիտի ըլլայ: Ամենայն հաւանականութեամբ այդ

դրամէն տոյար մը անգամ չի պիտի հասնէր Հայաստան: Ատիկա որոշ ըլլալու է ամեն խելացի անձի:

Այս սպաննութիւնները կարգադրուած են մարդերու կողմէ որոնք չառտարբերութիւն չեն իրենց խելացիութեանը, որոնք չափազանց վատնողի են նոյնինքն արարքը իրենց ձեռքով գործադրելու համար, եւ փոխանակ իրենց ընկեր՝ առաջ կը քշեն իրեն իրենց կոյր գերծնները՝ անկեղծօրէն հայրենաւէր այլ տղէտ երիտասարդներ, զորս համոզած են, թէ սպաննուելու համար նշանակուած անձերը արժանի են մահուան մերժած ըլլալուն համար նըպաստել իրենց:

Կրնան նոյնքան իրաւամբ մահավճիռ մը անցնել ձէյմա Պրայմի կամ ինծի դէմ, միեւնոյն պատճառով: Կը խորհիմ թէ աշխարհի մէջ բոլոր ունեցածս պիտի տայի եթէ անիկա ազատութիւն բերեր Հայաստանին, բայց սենդ մը պիտի չի տայի մարդերու որոնք փորձած են նպաստել չորթել մահուան սպառնալիքներով: Պիտի գիտնայի թէ ասանկ մարդոց կարելի չէ վստահիլ որ դրամը պարկեշտօրէն ծախսեն:

Սպառնալիքի ենթարկուած հայ վաճառականներէն ոմանք կրնայ ըլլալ իրապէս թերաւան հայրենասիրութեան մէջ: Եթէ այդպէս է ատիկա զերենք վարկաբեկող փաստ մըն է, բայց հայրենասիրութեան պակասը մահուան պատժի արժանի ոճիք մը չէ: Ի՞նչ պիտի բռնէ հայրենասիրութեան այն մարդոց, որոնք այս սպաննութիւնները գործելով լայնատարած անպատուութիւն բերեն հայ անուանին:

Ատիկա եւ կը հաւտամ թէ ըրին պարզապէս իրենց սեփական գրպանները լեցնելու համար:


Ես կը յարգեմ բոլոր պարկեշտ յեղափոխականները եւ անոնց սրտովս կը համակրիմ իրենց նպատակին, թէ եւ գլուխս համոզուած է թէ՛ ներկայ պարագաներուն մէջ յեղափոխական դուրսնուելութիւնը աւելի փնտա քան բարիք կրնէ հայ ազգին:

Բայց չեմ մտապէս պիտի թախանձէի զերենք ու եւ կայ չունենայ մարդերու հետ որոնք մահ կրտապանան մարդերու, եթէ ասոնք իրենց չի հաւտացած բաներուն համար դրամ չի տան, եւ նայիլ բոլոր այս տեսակ անձերու եւ իրենց ջատագովներուն վրայ իրեն հայ ազգին ամենավատթար թշնամիներուն:

Եւ ասիկա միայն իմ կարծիքս չէ:

այլ Պ. Պրայմը, Տիկին Ճոնիա Ուարտ Հաուսը, ձէյմա Պ. Բէյնթոմսը եւ բոլոր անոնցն ալ որոնք հայրենաբարութիւնը սրտանց կը բազման:

Ալիս Պրայմի



Միսս Սթոյ. Պաքսթէյ Սեպ . 14ի իրկուելը, Պոսթօնի Ազգ. Ժողովարան, Այնթապի վարդապետի գարոցին Ձեռք տարեգարծի հանգէսին խօսելով կրկնեց իր յորդորները իր հայ բարեկամներուն՝ դրամաշորքութեան եւ ըսպաննութեան քաղաքականութեան հետ ու եւ մեղաւորութիւն չունենալու համար: Օրինակ բերաւ Հայաստանի կոտորածները եւ դրամի համար ըսպաննուած հայ հարուստները նմանցուց այն հայերուն, որոնք մերժեցին իրենց հաւատքը ուրախալ եւ նահատակուեցան, մինչ վատասիրտները մահմետական դարձան ու ապրեցան: Ըսաւ նաեւ թէ «Պատմութեան մէջ հայերու դերն եղած է լոյս ու քաղաքակրթութիւն տանիլ նուազ քաղաքակրթ ազգերու մէջ, եւ ասոր մէկ դժնդակ հակասութիւնն էր՝ երբ կարգ մը հայեր սպաննութեան եւ դրամաշորքութեան այս անքաղաքակիրթ երկրի մը մէջ»:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԹՈՒՍՉՈՒՔ. 12 սեպտ. 1907

Պատուարժան թերթիդ չես գիտեր որ թիւին մէջ կարդացի թէ տեղուդ Ազգ. վարժարանը դատարկուելու վրայ է. նմանօրինակ հատ մըն ալ կար Յիլիպէի թերթին մէջ:


Շատ հաւանական է որ եթէ հոս ալ թերթ մը ունենայինք, անշուշտ պիտի գրուէր թէ, հոս ալ ծնողք ոմանք իրենց զաւակները, մանաւանդ աղջիկները կը զրկեն օտար վարժարանների Ասի կը վերագրուի գլխաւորաբար իսկ դաստիարակութեան եւ անկարգապահութեանը մեր վարժարանին մէջ:

Ներկայ հոգաբարձութիւնը երկու տարիէ ի վեր պաշտօնի վրայ է. առջի օրէն անոր անդամներէն մին հրաժարեցաւ. իսկ երկրորդ՝ գրեթէ երկրորդ շրջանին սկիզբը, որով մնացին միայն երեք անդամներ, այս երեքը բաւական էին վարժարանները կառավարելու, որովհետեւ ամենքն ալ բանի-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

102

ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ



ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՒԱԶԱՆԱՊԵՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

Այս խօսքերն աւարտած չէին, անա՛խուլամներն, որոնք թուով տասներկու հոգի էին, վազն ի վազ լեռնէն վար կը փախչէին: Բայց զնգակներն, որոնք կը տեղային իրենց գլխուն, մէկիկ մէկիկ կուտէին զանոնք ու գետին կը փռէին:

— Խան-Ճալատ... Նայեցէ՛ք, գոչեց մՀամր-պէ՛կ, մարդիկներս են կիյնան:

— Ախ, է՛րնչ ընեմ... եթէ անոնց վզէն կախած ըլլայի սա նուսխաներս, առարկեց Խան-Ճալատ հիմակ անոնք ալ անտրեւոյթ ոգիներ կը դառնային մեզի պէս:

— Մենք անբերեւոյթ ոգիներ եղած ենք:

— Հարկա՛ւ: Համիտ պէկ քիչ մը սիրտ առաւ: Գիշերուան խաւարը թանձրացած էր ու աստղերը կը պլպլային: Կամաց կամաց հրացանի ձայները դադրած էին ու խոր լուծիւն մը սկսած էր տիրել:

— Կեցէ՛ք... ես սուրիչ մը ունիմ, ըսաւ Խան-Ճալատ, փչեմ զայն որ ոգիները պահպանելու գտն մեզի:

— Ո՛ր ոգիներ, հարցուց Համիտ-պէկ:

— Նուսխաներու ոգիներ...

Ու սուրիչ մը սուրեց

Սուրիչին ձայնն արձագանգուելով խուճիւն հոսաւ: Քաջասիրտ աղբը ձայնին հետեւելով մինչեւ ապագածին

բովն եկան:

Ան ատեն Խան-Ճալատ հրամայեց որ չղթայի գարնեն այդ անարգ բռնակալը:

Համիտ-պէկ վախէն կծկուած չուշի մը պէս բնաւ դիմադրութիւն մը չըրաւ:

Ու չղթալով մը կապուելէն ետք՝ խուճիւն առաջնորդութեամբ չորս ժամուան հեռու վայր մը տարուեցաւ:

Երկու ահագին լեռներու մէջ քացուած նեղ ու խոր կիրճ մըն էր ա՛յն վայրն, ուր կանգ առաւ խուճիւն ու ապահով դիրք մը գտաւ:

Խան-Ճալատ, իր չղթանց վրայ հեղ. նական ժպիտ մը պատկերացնելով ըսաւ.

— Է՛յ, Համիտ պէ՛կ, քէֆդ ինչպէ՞ս է... հիմակ տեղի լաւ համոզուեցա՞ր թէ՛ սա կեանքներն անտրեւոյթ ոգիներ են ամենքն ալ: Նայէ՛... չը խաբուես... անոնք մարդիկ են... անոնք քիչըր են թուով... անոնք

վաշտերու դէմ դնելու չափ ուժ չունին... բայց անոնք անա՛նկ սիրտ մը ունին, անա՛նկ հոգի մը կրեն որ կառավարութեան թնդանօթներն տնգամ անգոր կը մնան: Ծանչցա՛ր Խան-Ճալատ... ճանչցա՛ր պարսկաստանցի ջուրտ ցեղապետը...:

Այս ըսելով՝ հրամայեց խուճիւնն որ անմիջապէս գետին փռեն զինքը:

Խուճիւնը հրացաններէն արձակուած գնդակներու մէջ տապալեց այդ իժը: Յետոյ կտրեցին անոր գլուխը, ջուստ ի մը մէջ գրին ու տարին գեղէն քանոթ մը հեռու ահագին ծառէ մը կտխեցին:

— Այսպէ՛ս... պէ՛տք է մէկիկ մէկիկ իշնան: Գոչեց Աւագակապետը՝ այսինքն Խան-Ճալատ: Աս չունեիր միայն ասանկով կրնան զսպուիլ, եւ թէ ո՛չ արգելք կը դառնան մեր ապագայ գործունէութեան:

Լոյսը ճեղքուելու մօտ էր: Աւագակապետը չարունակեց ձամ:

մայր երիտառարդներ էին. սակայն եւ տղայէս իրենց վրայ դրուած վատահոլութիւնը չիրականացաւ. նախ՝ խնայողութեան համար երկու վարժարաններ միացուցին եւ աղջիկ մանչ խառն դաս առնել սկսան. ասոր մէջ անպատուութիւն մը չըկար ըստ իս, որովհետեւ ընդհանրապէս 10 13 տարեկան տղաքներ էին. բայց Ուսուցչական Մարմինը որուն յանձնուած էր վարժարանին ամեն հոգը հոգաբարձութեան կողմէն. իր թոյլ ընթացքին պատճառաւ, հետզհետէ ծնողաց գանձատներուն տեղի տուաւ եւ պզտիկ անհաճոյ գէպեր ալ պտկաս չեղան:

Ասոր համար անցեալ տարի ժողովուրդը չուզեց այլեւս խառն դասախօսութիւններ եւ պահանջեց առանձին վարժարաններ ըստ առաջնոյն. բայց հոգաբարձութիւնը մտիկ չընծաւ համար. այս տարի ծնողները թաղ. խորհրդին հանրագրութեամբ դիմեցին եւ գարձեալ պահանջեցին որ խառն դասախօսութիւններ վերանայն:

Հետեւաբար անցեալ կիրակի ազգային խորհրդարանին մէջ թաղային ժողով գումարուեցաւ, եւ երբ խնդիր եղաւ որ խառն դասախօսութիւնը վերցուի, սաստիկ վիճարանութիւն մը սկսաւ. ուսուցիչներէն մին բուն կերպով յարձակեցաւ ծնողներէն միայն վրայ՝ որ վարժարանը անբարեկարգ վիճակը մէջ է կրէր. ուրիշ մը կրէր թէ վարժարաններուն վրայ ո՛չ հոգաբարձութիւնը եւ ո՛չ ալ ուսուցիչները պէտք եղածին պէս կը հրակէին. եթէ հսկողութիւն ըլլար, կը պոռար, նախկին հոգաբարձու մը, տղաքները պիտի չհամարձակէին պատերը փլցունելուն, անոնց վրայ զմեւ լիով անուններ փորագրելու, գործարաններուն մէջ ապօրինի խօսքեր գրելու եւ լն. եւ լն. ասոնք իրողութիւններ են ըսաւ. եւ հրաւիրեց ներկաները որպէսզի երթան անգամ մը իր ըսածը ստուգեն. բայց ոչ ոք տեղէն չարժեցաւ. որովհետեւ գրեթէ անոր ըսածներուն կտտաբեալ ճշմարտութիւններ ըլլալը:

Հոգաբարձութիւնը կառարկէ թէ ժամանակ չունի վարժարանները այցելելու, մօտէն հսկողութիւն կատարելու. եւ որովհետեւ Ուսուցչական Մարմնոյն վրայ ձգուած է ամեն հոգ. անոնք ալ ուզածունէն պէս կը վարուին. ախո՛ս, եթէ քիչ մը խիղճ ունենային, եղած գիտողութեանց տեղի չպիտի տային:

Վերջապէս, հոգաբարձութիւնն ալ

համոզուեցաւ այս տարի անջատելու աղջիկները, մանչերէն, բայց հոս ալ, պիւտճէի խնդիր մը ելաւ. կերեւի թէ արդէն բաց մը կայ, եւ թէ այս տարի այս բացը աւելի պիտի ըլլայ. բայց մենք կը կարծենք թէ եթէ հոգաբարձութիւնը եւ Ուսուցչական Մարմինը ուզեն խղճի մտօք կատարել իրենց յանձնուած պաշտօնը, ժողովուրդը չը պիտի զլանայ իր աջակցութիւնը ինչպէս անցելոյն մէջ տեսնուած է. նախ կին հոգաբարձութիւնը հինգ տարուայ շրջանին մէջ բնաւ բաց չունենալէն զատ զրամ ալ աւելցուցած էր. կը յուսանք որ այնչափ խօսքերէն վերջը այս տարի պաշտօնական մարմինները պիտի ջանադիր գտնուին ժողովուրդեան վստահութիւնը գրաւելու համար միջոցներ խորհիլ եւ այս գանգատներուն առաջըր առնել:

ԹՂԹԱԿԻԾ

ԿՈՍՍ ԼԵՒՈՆ ԹՈԼՍՈՅԻ «ՄԻ ՍՊԱՆՆԵՐԻ» ԱՆՈՒԱՄԲ ՊՐՇԵԻՐԸ

1907 յուլիս ամսոյն մէջ «Ռէնովա. սիօն» անուն հրատարակչական տան մարդոցմէ մին բանաւր դրուեցաւ Բեգերսպուրկի կրթական դատաւորի կողմէն, այն ամբաստանութեամբ թէ նա տարածած է պրօչիւր մը «Մի Սպաններ» մակագրութեամբ, զոր գրած էի եօթ տարի առաջ:

Այս փոքր գէպը նշանակալի է եթէ բաղդատութեան դնենք միւս առօրեայ բանտարկութիւններու, մըլտական աքսորներու, տաժանակիր աշխատութեանց հետ. այն պատուական համար որ անոր յաջորդած է:

Այժմ երբ ամբողջ Ռուսիան մշտական յանդուգն ու յաճախ սպանութիւններու առջեւ կը հեծէ, կը գրուի գիրք մը որ հին օրէնքը կը հաստատէ այն օրէնքը զոր ընդունած են հազարաւոր դարերէ ի վեր բոլոր ազգերու կրօնքները այսինքն «Մի Սպաններ»ը եւ ա՛յս այդ գրքոյ կը կարգիլուի էւ նա որ գայն կը տարածէ ոճրագործի պէս բանաւր կը դրուի:

Պիտի կարծէի թէ կառավարութիւն մը որ երկար ժամանակէ ի վեր ի զուր կը կռուի սպանութիւններու դէմ որ ասկաւ առ տակաւ կը գրաւէ ամբողջ ռուսերը, պարական պիտի լինէր քաջալերել մահուան հակառակ գաղափարներ տարածողը:

Բայց զարմանալին այն է որ կառավարութիւնը ոչ միայն չի քաջալերեր այլ եւ կը պատժէ:

Գուցէ հարցնող ըլլայ թէ «Մի Սպաններ» գրքոյ կը իր տիտղոսին համապատասխան չլինի եւ պարունակէ այնպիսի բաներ, որոնք հակառակ լինին կրօնի եւ բարոյականին:

«Պրօչիւրը գրելս երկար ժամանակ լինելուն գուցէ մոռնայի պարունակութիւնը, ուստի ուշագիւր կերպով նորէն կարդացի. Այ, այս պրօչիւրը իր վերնադրէն գուրս բան մը չըսեր եւ միայն հետեւեալը կը պարունակէ:

«Մեր պաշտած դաւանանքին հակառակ է ամեն մահ որ մարդ իր նմանին կը պատճառէ:

Թագաւորներու, կայսերու կամ ուրիշ կառավարող անհատի սպանութիւնը յեղափոխական տարրի կողմէն յիմարութիւն է պարզապէս. որովհետեւ վարչական կեանքի վիճակը այդ կերպով չի կրնար բարեփոխուիլ. Իսկ այդպիսի սպանութիւններու փաստերը նուազ հիմք ունին վարչական մարդոց սպանութիւնը այն պատճառաւ որ անոնք իրենց պաշտօնին մէջ զեղծում կը գործեն շիտակ չէ, որովհետեւ մարդիկ կը մոռնան որ իրենք իսկ են պտտմառը, որովհետեւ իրենք են կառավարութեան հնազանդողները եւ օգնողները որ ընեն անոնք այն, որու համար յետոյ զանոնք կը հանգիմանին:

Կարելի է որ «Ռէնովասիօն» տան պաշտօնեան բանտարկուած է. ոչ թէ «Մի Սպաններ» գրքոյ կին համար, որ գրուած է իտալիոյ թագաւորի մահուան առթիւ, այլ համանուն ուրիշ պրօչիւրի մը համար որ կը պարունակէ հետեւեալ երեք յօդուածներ.

«Նամակ տասնապետի մը» Զինուորի մը յուշատետրը» եւ «Սպայի մը յուշատետրը»:

Կարգաչի նաեւ այս երեք յօդուածներն ալ. միեւնոյն բաները գտայ հոն ինչ որ առաջիններու մէջ գտած էի. Հաստատութիւնը Մի Սպաններ պատուիրանին եւ մահաւանդ բացատրութիւններ, որ սպանութեան պատրաստութիւնը, օգնութիւն որ այդ ուղղութեամբ կը լինի, հաւասարապէս յանցաւոր բաներ են եւ հակառակ Գրիստոսի օրէնքին:

Այնպէս որ ընդհանրապէս այս յօդուածներուն իմաստը այն է որ քրիստոնեան չպիտի օգնէ սպանութիւններուն, ոչ անոնց մասնակից պիտի լինի եւ ոչ ալ պիտի սպաննէ:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայր Աթոռում հետզհետէ քաղաքակրթական նորութիւններ են երեւում. Մի քանի ամիս է արդէն որ բանում է էլեքտրական կայարանը և լոյս է մատակարարում վեհարանին, միաբանութեանը, ճեմարանին և միւս հաստատութիւններին. Պատրաստ է արդէն էլեքտրաղացը, որից տարեկան մի քանի հազար ռուբլի զուտ արդիւնք է սպասվում. փորձեր են կատարվում և արգէն աշողութեան ակներեւ նըշաններ կան էլեքտրականութեամբ գետնի տակից ջուր հանելու համար. Այժմ արդէն մեքենան մօտ 5 դիւյմ ջուր է հանում. ականները գետնի տակ՝ շարունակում են փորել այլեւայլ ուղղութեամբ, որոնց խորութիւնը գետնի տակի ջրի մակերեւոյթից հինգ արշին պիտի լինի. Յոյս կայ, որ աշողութեամբ պտակվի այս գործը և կարելի լինի այնքան ջուր ստանալ, որ թէ՛ անտառը պահվի և թէ՛ մեծ տարածութեամբ բամբակ և ուրիշ թանկագին բոյսեր ցանվեն. Վանքի կալը նոյնպէս կալում է էլեքտրական ոյժով և մեքենայով:

«Կոչնակ»ի մէջ կը կարդանք որ Նիւ-Եօրքի մէջ 20է աւելի կարող և հաւատարիմ հայ գործաւորներ Ամերիկեան գործարաններէ վաճառու են, հայ ըլլալու դժբաղդութիւնը ունենալուն համար:

Ահա դրամաշորդական սպանութիւններով պարծենցող խելառներուն տուած արգասիքը:

Աթէնքի հայերի մատուռին Հոգաբարձութիւնը աեսներով որ ժողովուրդը չկրնար վճարել մատուռի 4 հազար ֆրանք պարտքը և ոչ իսկ հայթայթել անոր տոկոսներին և քահանայի թոշակի կա՛մոնաւոր վճարումը, Կ. Պօլսի Պատ. Խարքարանին տեղե-

բան Միշտ լեռներու. հովիտներու, ձորերու, մանաւանդ վտանգալից կիրճերու մէջէն՝ յառաջանալով՝ անցաւ Դատուան, անցաւ Սեփան կողուած սարին շրջակաները, անցաւ Արճէշու վրայով, անցաւ Յուսկան որդւոյ վանքին լեռնադաշտերէն եւ մօտեցաւ Թրք-Քէշանի գեղեցիկ ըլլորներուն, որոնք կը շրջապատէին քնութեան այդ չքնաղ տեսարաններու մէջ կառուցուած գիւղը:

— Տղերք մընչեց լեռազակապետը. շուրջ չորս օր է որ ճաբայ կը կրտրէք. ես յաւ գիտեմ որ չափազանց յոգնած էք. Ահա՛ մեր երկրին ամենէն ապահով ու գեղածիծաղ վայրը. Սարլուրները, որոնք անտառներով ծածկուած են, ժամանակ մը ապաստանարան կարող են ըլլալ մեզի. Գալով ուտելիքի մօտին, ասիկա պիտի հայթայթէ՝ մենէ կէս ժամ հեռու գտնուած գիւղի մը մեծաւորն, որ Գուրտ է. բայց կատարելապէս թուրք

կառավարութեան հակառակորդ մըն է:

— Դուք կը ճանչէ՞ք զինքը, վտրպետ, հարցուց իր տեղակալ Արապօ, որ յաղթանդամ ու անձեւերութեամբ համակուած երիտասարդ մըն էր:

— Այո՛, սիրելի տեղակալս, պատասխանեց Աւազակապետը. Բայց բաւական ատեն կայ որ զիրար տեսած չենք. Եւ որովհետեւ անկա Ֆաքիրի մը կերպարանքին տակը ճանչցաւ զիս, ահա՛ ես նոյն տարագող կը ներկայանամ իրեն ու յետոյ կը յայտնեմ նըպատակս:

— Ո՛հ, ներեցէ՛ք վարպետ.. առարկեց Արապօ. ասիկա ձեր գիտնալիք բանն է: Մեր խելքը չը հասնիր ձեր ըրածներուն ...:

Աւազակապետը փոխեց իր տարազը. Դարձեալ հագաւ ֆաքիրի հագուստն ու բլուրներու մէջէն յառաջանալով գիւղը մտաւ:

Առանց մէկու մը հարցունելու մեծ ու ծառերով շրջապատուած տունի մը

առջին կանգ առաւ Դուռը բաց էր. ուղղակի ներսը գնաց:

Ատ միջոցին պարթեւ հաս կով, յաղթանդամ ու ծանրահայեաց նկարագիրով մադ մը գուրս կնիւլէր դահլիճէն:

Այս մարդը գիւղին մեծաւորն էր. — Ծահվար-պէկն էր:

— Վա՛յ... բարի՛, բարի՛... բացազանչեց Ծահվար պէկ խորին ուրախութեամբ մը լեցուած Սիրելի բարեկամս, դո՛ւք հոս... աս ի՞նչ բաղդ է ի՛նչի...:

— Է՛հ, պէ՛կս, դիտեցէ՛ք թէ աշխարհքիս մէջ կայ նուիրական յիշատակ մը. որ չը մոռնուի զերեզմանէն անդին ալ. նկատել տուաւ Աւազակապետը. ասիկա անկեղծ մտերմութիւնն է որ միացման կապը կը դառնայ երկու հոգիներուն. Այն օրէն, ուր ճանչցանք զիրար ու վրատանցանք իրարու, մենք ուխտած եղանք անմոռանալի յարաբերութիւն

մը ընել եւ իրարմէ չը ձեռնկլ կառավարութեան շարութիւնը. Ահա՛նկ չէ՞...:

— Ծշմարիտ է:

— Լաւ ուրե՛մն. ինչպէ՞ս կը տեսնէք:

— Թէպէտեւ կոտորածները դադրած են, սակայն շերտին ճնշումն պիտի վտանգաւոր կերպարանք մը առած է. Մտնաւանդ՝ առաջ այդ ճնշումը կեանքի բերուի համար էր. մինչդեռ այս օր փոխուեցաւ և կառավարութիւնը կը նեղէ Գուրս գեղացիներն ու՝ անոնց մասին փոքրիկ պատճառ մը գտնելուն պէս, չը խնայեր ու ամիսներով բաւտարկել կուտայ զանոնք. Դե՛ռ չաւաթ մը չըկայ... ասկից երկու ժամ հեռու հողող Տէրկպէկ գեղի մեծաւոր բանտարկուեցաւ:

— Ի՛նչու համար:

— Իբրեւ թէ՛ մեղսակից է եղեր կեանքներն ու Գործիչներուն:

(Շարունակելի)

կազմելով փակեր է մատուցել մինչև ուր կարողանայ վճարել այդ պարտքը:

— Էջմիածնի Գեորգեան ճեմարանին տեսուչ նշանակուել է ծանօթ հրապարակագիր Տ. Մինաս Բէրբէրեան: Նախկին ուսուցիչներէ մի քանին արդէն հրաժարած լինելով, նոր տեսուչն հաւանօրէն ուսուցչական մի նոր խումբ պիտի կազմէ: Նախորդ տեսուչը Տ. Մեսրոպ Վ. Մեսրոպեան Կ. Պօլսի գծով ուղեւորութիւն մը կընէ այժմ Եգիպտոս, Աւստրիա և Իտալիա, այդ երկիրներէ մայրաքաղաքներէ, ինչպէս և Վենետիկ թանգարաններէ մէջ գտնուած հայերէն ձեռագիրներն աչքէ անցունելու և ուսումնասիրելու նպատակով:

ԹԱՏՐՈՆ ԲՐՈՇԷՔ

Այս երեկոյ «ԲՐՈՇԷՔ» թատրոնի մէջ տեղի պիտի ունենայ առաջին ներկայացումը Տիկին Սիրանուշի կազմած թատերական ընտիր խմբին՝ որ պիտի ներկայացնէ:

ՄԷՏԷԱ

ողբերգութիւն 5 արարուած ՍՈՎՈՐԻՆԻ

Տկ. Սիրանուշի հանրածանօթ անունը ինչպէս և իր առաջնորդած խմբի ընտրութիւնը մեզ յուսալ կուտայ որ թատերասէր ազգայինք պիտի փութան ներկայացուելիք թատերախաղը գրեանահատելու, մանաւանդ որ Տկն. Սիրանուշի հազիւ 7-8 ներկայացում պիտի տայ ու մեկնի:

ՀԱՎԱՏՈՒՄ

ՏԱԽԻԼՅԷ

Մէծլիթի վիւթէլանըն իսթիֆա իւր Էճէքլէրի շալա, էլան տէվամ իսթէքտէ տիր. Փէխ. բրէնսին իպտամը իւզրէ վիւթէլա մէճլիսի թա սօպրանիէնին քիւշատընա վէ Փէխ. բրէնսին էվրօբատան ալտէթիւնէ գատար իշլէրինէ տէվամ էտէճէքլէրինէ գարար վէրմիշլէր:

— ՍՏԱՄՊՈԼՈՎԻՍՏԷՐԻՆ հալէֆի էլան գարարլաշմարշ տրր, հէր նէ գատար իքի ալ էվլէլ Փէխ. բրէնս հազրէթլէրի Յան. քովիստ վէ Տէմօքրաթ քարթիլէրինտէն պիր գաշ շարթլար լալ միւլագաթտա պուլունմուշ իսէ, պէյն էլ ահալի իքի բարթիլինն պիրիսի ինթիխապ օլաճաղընա գանի օլմուշ տըր. Լաքուն պու իշին գարարը Փէխ. բրէնսին էմրինէ միւթէվագըֆ

տըր. էօյլէ զանն օլունուր քի սէնէնին նիհայէթինէ գատար վիւթէլա մէճլիսի տէվամ իտէճէք տիր:

Ր Ո Ւ Ս Ի Ա

2 Հոկտմ.

ԲԵԴԵՐՍՊՈԻՐԿՏԱՆ պա թէլէկրաֆ իշար օլտուղունա նազարէն, ասկէրիէ մէճլիսին գարարը իւզրէ Սարվատաքի բամուկ ֆապրիգասընըն 8 իշլէրի իտամա մահքիւմ օլմուշլար. մէջքիւր ֆապրիգանըն տիրէքթօրընը գաթլ իթտիքլէրի իշին:

ԻԻՉԻՆՃԻ առմանըն ինթիխապընա կէրէք Բեթերսպուրկտա կէրէք Մօսկուտա ահալի իշթիւրաք էթմէտիղի իշին, ինթիխապաթ վուգու պուլմամըշ տըր. պիր մահալտէ իտէն իրատ սահիպլէրինտէն եալընը պէշ քիշի իշթիւրաք էթմիշլէր:

— ԱՍԿԷՐԻ ԷԼԿիսէլէր կիյինմիշ սէրպէսթիէյէ թաթաֆտարանտան իւշ շախս Սէվաստաթօլտա պրէսթի ասկէրի գըշլասընա կիրէրէք, տէրունինտէ պուլունան ասկէրի հիւքիւմէթէ գարշը իսեանա թէշլիք էթմէք իստէմիշլէր իսէ պիր զապիթին մէհարիթի իլէ մուաֆֆադ օլամամըշլար, գօմիթալար պու հալտէ գըշլատան չէքիւմէյէ մէճպուր օլմուշլար, ֆագաթ ֆիրար էթտիքլէրի զէման պիր պին պաշը իլէ պիրտէ եիւզ պաշը րէվօլվէրլէ եարալամըշլար:

— ՍԷՎԱՍԹԱՔՈԼՏԱՆ պա թէլէկրաֆ իշար օլտուղունա նազարէն Գարա տէնիզ րուս տօնանմասը իլիմանտան հարաքէթ իթմիշ, պուլուն սէպէպի իսէ, տօնանմանըն տէրունինտէ պուլունան թալֆալարըն իսեան էտէճէքլէրի չիւփէն օլունմուշ տըր:

ԱՃԷՄԻՍՏԱՆ

Թէհրան

ԱՃԱՆՍ ՐԻԻԹԷՐԻՆ իշարընա նազարէն, Շահրն էմրի իլէ վիւզիւրա վէ. ասրլատէկեանտան սէրտարլար վէ էմրիլէրտէն միւրէքքէպ 25 զէվաթ Բարլամէնթէ միւրաճաթլա գանունըն էսասիէ վէ միլլէթ մէճլիսինէ հէմէֆքեար օլտուքլարընը պէյան իթմիշլէր. մէճլիս ազալարը կայէթ մէճնուն օլուպ ալգըշլամըշլար, էօյլէ զանն օլունուր քի հալը հազըր կիգուրէքէ էյլիէ եիւզ թութմաքա տըր. միլլէթ մէճլիսի թաթիլ էթտիքլէրի վագըթ եաշասըն Շահ, եաշասըն Բարլամէնթ տէյուպ էլ չըրֆմըշլար:

— ՄԱՃ ԷԼ ՄՈԻՃԷԿ Թիճարէթ նազըրը վէ նէյէր մուշէկ մէարիֆ նազըրը ինթիխապ օլմուշլար:

— ԹԷՀՐԱՆՏԱՆ իշար, օլտուղունա նազարէն, ասըլատէկեան ասկէրի սիրտարլարտան վէ մէ-

մուրին միանընտա 10 միլիօն ֆրանք իանէ թօփլանմըշ իշպու բարա աճէմ սինօրընտան թիւրք ասկէրինի տէֆ իթմէք իշին գուլլանըլաճաք տըր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՋԱԽԻՐԷ

ՊՈԴՂՏԱՅ			
Վալոն	100 քիւ	20.	-21.60
Արապա	57-62 լիպ.	14.40-17.20	
ԱՐԱՍ			
Վալոն	100 քիւ	15.	-15.20
Արապա	45-52 լիպ.	8.40-9.20	
ԵՌԻԼԱՅ արապա	33-36 լպ.	6.	-6.60
»	100 քիւ	13.80-14.	
ՋԱՎՏԱՐ արապա	52-57 լպ.	12.60-13.	
ՅԱՍՈՒԼԵԱ	100 քիւ	20.	-28.
ՏԱՐԸ արապա		8.	-8.60
ԲՈԼՈՉ արապա	55-60 լպ.	15.	-50.16
ՄԻՍԻՐ ԵՈՂ			
Կիւնտէ վալոն	20-25 վէ	250-300	
արապա կէլմէքտէ.	վալոն մուամէլէսի նաթօլէօն	20 ֆր.	արապա մուամէլէսի քէզա նաթօլէօն 20.
ՊԱԳԱԼԻՑԷ			
Վարնա բիպասընտա	պագալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, Թիթուն ֆրանք իլէ :		
ԳԱՀՎԷ		1.95-	2.20
ՇԷՔԷՐ Նէմցէ		90.	
ՇԷՔԷՐ քէսմէլ	սանտը	44.50	
ԲԻՐԻՆՃ ձէնօվա չուվալը		45.50	
» ֆիլպէ »	ԵՈՂ		
» ինկիլիդ »		33 1/2	
Բիզօ »		50.	
ԿԱՉ Սանտըր		10.80	
ՋԷՑԹԻՆ Խաղը քիւ		1.30-	1.35
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ		40.	
Եուլունթա	100 ատէթի	6.80	

ՇԱԽԻԼ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՊՈՐՏ *Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. « Բ. » [433 էջ] 2 ֆր. ՆՈՐ ԵՐԿԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ ՀԱՅԱՍՏԱՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԳ անդամ տպագրուած և ճոխացած. Գին 1 ֆր. ՆԷՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութիւնէն առաջ. Գին 50 ասնգիւմ. ՀԱՅԵՐԵՆԻԹԻ ՋԱՔԵՐ Պատկեր մը Ճաճկահայաստանի իրական կեանքէն: Չեղչեալ գին 1 ֆր. Այս գրքերը տառապալու համար դիմել ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ո Ւ Ն Ք» ի խմբագրութեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

Ներկայ տարւոյ մեր այն բաժանորդները՝ որոնց երկտողերով զատ զատ իմացոյցինք իրենց պարտքը, կը խնդրուի որ, հաճին ընդ փոխ վճարելու: Այդ պարտքները գիտնալով, են թէ՛ աշխարհի որ կողմը որ երթան՝ լրապիւրնու բաժնեգիրը կանխիկ վճարել ընդհանուր օրէնք է: Մինչդեռ իրենք զեռ չեն վճարած երբ արդէն տարւոյն իննեորդ ամսոյն մէջ կը գըտնուինք: Եւ կը ստիպուինք հարցնել, այսպէ՞ս պէտք է ին վարուիլ անոնք, երբ մենք տպագրական մամուլին գըտնուած գիւրացներու համար աջակցութեան անհրաժեշտ պէտք ունենալինք ծառնուած ինքը:

«ԱԶԳ»

Ամերիկայի Պօսթոն քաղաքին մէջ սկսած է հրատարակուիլ ԱԶԳ անունով չարաթաթերթ մըն ալ: Այս նոր թերթը կոչուած է ոչ միայն ամերիկահայ կեանքի շինիչ ազգայնեան մէջ ըլլալ, այլ նաեւ՝ ազգային ինքնագիտակցութեան և յեղափոխական ճիշմարտութեան օտկան մը:

Ինչպէս կը հաւատուի մեզ, ԱԶԳը վեր. Հնչակեան Նահանգային վարչութեան բերանը կը նկատուի, եւ անիկայ պիտի ձաղկէ յեղափոխութիւնը շահագործող և զայն իրենց խառնութիւնով մակարոնները: ԱԶԳին տալիկան բաժնեգիրն է արտասահմանի համար 10 ֆր. Հասցէն է Խմբագրութիւն ԱԶԳի Բ. Օ. Պօքս 2387 ՊՍԹՈՆ (Ամերիկա)

ԻՇ ԱՐԱՅՆԱԼԱՐԱ

Գուրտ-Բուրնար գաղտնի տառերը՝ ճշլար քէօյլիտէ միւթէվէֆա Թադէոս աղա Պօղոսեանըն մալիաֆաթուրա վէ պագալիյէ տի. քեանը վէ տէրունինտէքի 10,000 ֆրանգա եագըն դըյմէթ. տէ օլան մալլէր սաթրլաճաք տըր: Թալիպլէսինէ եալընը մալլէրի սաթրուպ, տի. քեանը քիւրա իլէ տախի վէրիլէ պիլէճէք տիր: Մէքթիւր տիւքան քէք իշլէք վէ միւշթէրիսի Եթիստէ օլտըղընտան հաղըր պիւ իշլ արգու քէշ օլանլար պու ֆրսաթտան իսթիֆատէ իտէպիլիլէր: Շու ասրիսէ միւրաճաթ օլունմալը

Մատամ Մանիկի Թ. Պօղոսեան օգոյիա Գուրտ Բուրնար Ալի Թուրքըլար

Издатель: Д-ръ М. Торосианъ

печатница Д. Тодоровъ С-не — Варна

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՔՈՒՐ. ԱԺԱՆ ԵՒ ՇՈՒՏ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ

«Իրաւունք» ի խմբագրութիւնը յանձն կառնէ տպագրական ամէն տեսակ գործեր:

Հարսանեկան հրաշիրագրեր, Նամակագրութիւնք, Մանագրներ, Այցաքարտեր, Յայտարարութիւնք, Հաշտերաղթեր, Եւայլն պատուոտել մեծ խնամքով և չափաւոր գներով:

Վարչական զարգացործերու համար սկսած են հասնիլ նոր եւ Եւրոպայի տառեր:

Խմբագրութիւնն իր տրամագրութեան տակ ունի նաեւ Պուլկարներէն և Յրանսերէն գրեր ամէն տեսակներով:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԽՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ

ՎՃԱՐՈՒՄԸ ԿԱՆԹԻԿ